Հաստատված է
«ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
փակ բաժնետիրական ընկերության
միակ բաժնետիրոջ կողմից՝
24.07.2023թ. N 07-23-2 որոշմամբ
Գործադիր տնօրեն՝ Վաչիկ Գևորգյան

24 հուլիսի 2023թ.

«ԷՖՐԻՔՈԹ ԿԱՊԻՏԱԼ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2023

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն Կանոնակարգով սահմանվում են «Էփրիքոթ Կապիտալ» փակ բաժնետիրական ընկերության (ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված ներդրումային ընկերություն, լիցենզիայի համար՝ 0022, ՀՎՀՀ՝ 02871135, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 10, 110 տարածք) կողմից հետևյալ ծառայությունների մատուցման կանոնները.

1.1.1. խորհրդատվություն ընկերությունների՝ միաձուլման և ձեռքբերման (Mergers and Acquisitions), միացման, բաժանման, առանձնացման կամ վերակազմավորման ձևով վերակազմակերպման հարցերի վերաբերյալ,

1.1.2. խորհրդատվություն կապիտալի կառուցվածքի վերաբերյալ,

1.1.3. խորհրդատվություն կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ,

1.1.4. խորհրդատվություն Արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման վերաբերյալ,

1.1.5. խորհրդատվություն արժեթղթերում ներդրումների հետ կապված հարցերով,

1.1.6. Արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների և այլ ընդհանուր ներդրումային առաջարկությունների կազմում և տարածում:

1.2. Սույն կանոնակարգը հանդիսանում է հրապարակային փաստաթուղթ, որին կարող է ծանոթանալ ցանկացած շահագրգիռ անձ: Սույն կանոնակարգը ենթակա է հրապարակման Խորհրդատուի պաշտոնական կայքում:

1.3. Խորհրդատուն Ծառայությունները մատուցում է համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, դրանց հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի, սույն կանոնակարգի, Խորհրդատուի այլ ներքին իրավական ակտերի և Պայմանագրի:

1.4. Սույն կանոնակարգը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

1.5. Սույն կանոնակարգում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

Ազդագիր. Թողարկողի և նրա Արժեթղթերի վերաբերյալ Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված տեղեկություններ պարունակող փաստաթուղթ, որի հիման վրա իրականացվում է Արժեթղթերի հրապարակային առաջարկը և (կամ) Կարգավորվող շուկայում առևտրին թույլտվության ստացումը,

Ածանցյալ ֆինանսական գործիք. Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված գործարքները,

Արժեթուղթ. Օրենքի 3-րդ հոդվածի 1-2-րդ, 5-7-րդ կետերով սահմանված գործիքները,

Գործադիր տնօրեն. Խորհրդատուի միանձնյա գործադիր մարմին, որը ՀՀ օրենսդրությամբ և Խորհրդատուի կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է Խորհրդատուի գործունեության ընթացիկ ղեկավարումը,

Գործընկեր. անձ, որի ներգրավմամբ և/կամ որի միջնորդական ծառայություններից օգտվելու միջոցով Խորհրդատուն Ծառայություններ է մատուցում Հաճախորդին,

Խորհրդատու. «Էփրիքոթ Կապիալ» փակ բաժնետիրական ընկերություն ներդրումային ընկերությունը,

Խորհրդատուի պաշտոնական կայք. www.apricotcapital.am համացանցային կայքը, որում Ընկերությունը հրապարակում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված, ինչպես նաև այլ անհրաժեշտ տեղեկատվություն,

Ծառայություններ. Պայմանագրի հիման վրա Խորհրդատուի կողմից Հաճախորդին մատուցվող՝ Պայմանագրի համապատասխան կետում և սույն կանոնակարգի 1.1. կետում թվարկված ծառայությունները,

Կանոնակարգ 4/06. ԿԲ խորհրդի որոշմամբ հաստատված «Որակավորված ներդրողներ համարելու չափանիշները և անձանց՝ որպես որակավորված ներդրողներ գրանցման կարգը» թիվ 4/06 կանոնակարգը,

Կանոնակարգ 4/07. ԿԲ խորհրդի որոշմամբ հաստատված «Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց գործունեության նկատմամբ պահանջները» թիվ 4/07 կանոնակարգը,

Կարգավորվող շուկա. հանրության համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն մատչելի կազմակերպական, իրավական և տեխնիկական միջոցների համակարգը, որը կանոնավոր կերպով Արժեթղթերի, ինչպես նաև Ածանցյալ ֆինանսական գործիքների առքի և վաճառքի առաջարկների հանդիպման վայր կամ միջոց է կազմակերպում, տրամադրում, ապահովում կամ իրականացնում է Արժեթղթերով, ինչպես նաև Ածանցյալ ֆինանսական գործիքներով առևտրի կազմակերպման սովորաբար իրականացվող գործառույթներ: «Կարգավորվող շուկա» հասկացության մեջ ներառվում են բորսան և այլ կարգավորվող շուկաները,

ԿԲ. ՀՀ կենտրոնական բանկը,

Հաճախորդ. Խորհրդատուի հետ Պայմանագիր կնքած անձ,

Պայմանագիր. Խորհրդատուի և Հաճախորդի միջև կնքված՝ Խորհրդատվական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի հիման վրա ծագում և որով, կարգավորվում են Հաճախորդի և Խորհրդատուի իրավունքներն ու պարտականությունները՝ կապված Խորհրդատուի կողմից Հաճախորդին Ծառայություն- ներ մատուցելու հետ: «Պայմանագիր» հասկացության մեջ ներառվում են նաև սույն կանոնակարգը, Սակագները և Խորհրդատուի այլ ներքին իրավական ակտերը, որոնք հրապարակվում են Խորհրդատուի պաշտոնական կայքում,

Պատասխանատու աշխատակից. Խորհրդատուի աշխատակից, որը պատասխանատվություն է կրում Հաճախորդի հետ Խորհրդատուի կապի ապահովման համար,

Սակագներ. Գործադիր տնօրենի կողմից հաստատված՝ Ծառայությունների սակագները, որոնց համապատասխան Հաճախորդը Խորհրդատուին վճարում է Ծառայությունների համար,

Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներ. առձեռն առաքում, հաղորդակցություն Պայմանագրի համապատասխան կետում նշված էլեկտրոնային փոստի հասցեների և հեռախոսահամարների, Խորհրդատուի և Հաճախորդի նախնական փոխադարձ համաձայնությամբ՝ նաև էլեկտրոնային հաղորդակցության այլ կապուղիների (օրինակ՝ բջջային հավելվածների) միջոցով, փաստաթղթերի փոստային/սուրհանդակային առաքում և առձեռն ստացում՝ ստացման փաստը հավաստող ստորագրությամբ, փաստաթղթերի հրապարակում Խորհրդատուի պաշտոնական կայքում: Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցները հանդիսանում են այդպիսիք Կանոնակարգ 4/07-ի իմաստով,

Օրենք. «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը:

1.6. Սույն կանոնակարգում օգտագործվող այլ հասկացությունները սահմանված չլինելու դեպքում ունեն Օրենքում և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերում սահմանված նշանակությունը, իսկ դրանցում սահմանված չլինելու դեպքում՝ միջազգային գործարար սովորույթներով այդ հասկացություններին տրվող նշանակությունը, եթե այլ բան ակնհայտորեն չի բխում կոնկրետ հասկացության կիրառման մասնավոր դեպքից:

1.7. Եթե սույն կանոնակարգի որևէ դրույթի կոնկրետ համատեքստից ակնհայտորեն այլ բան չի բխում, դրա դրույթների մեկնաբանության սկզբունքները հետևյալն են՝

1.7.1. ցանկացած փաստաթղթի՝ ներառյալ, բայց առանց սահմանափակման՝ Պայմանագրի վկայակոչումը, մեջբերումը կամ դրան հղումը ենթադրում է տվյալ փաստաթղթի գործող տարբերակի, ներառյալ՝ դրա բոլոր փոփոխություններն ու լրացումները, մեջբերումը, վկայակոչումը կամ դրան հղումը, եթե տվյալ վկայակոչման, մեջբերման կամ հղման մեջ հատուկ նշումով սահմանված չէ հակառակը,

1.7.2. կետերին բոլոր հղումները վերաբերում են սույն կանոնակարգի կետերին, եթե հատուկ նշումով սահմանված չէ հակառակը,

1.7.3. գլուխների անվանումներն ունեն կողմնորոշիչ նշանակություն և չեն ազդում դրանց բովանդակության նշանակության և/կամ մեկնաբանության վրա,

1.7.4. եզակի թվով սահմանված հասկացությունները նաև արտահայտում են նույն հասկացության հոգնակի թիվն ու հակառակը, եթե այլ բան չի բխում հասկացության կիրառման մասնավոր դեպքից,

1.7.5. ցանկացած անձի վկայակոչումը վերաբերում է նաև օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իրավաչափ հիմքերով նրան փոխարինող անձին, նրա ներկայացուցչին կամ իրավահաջորդին,

1.7.6. սույն կանոնակարգում օգտագործվող «սույն» բառը և դրա հոլովաձևերը, դրանցով կազմված արտահայտությունները և նման նշանակություն ունեցող այլ բառերը վերաբերում են տվյալ դրույթը պարունակող կետին, բացառությամբ «սույն կանոնակարգ» արտահայտությունից, որը ենթադրում է ամբողջ կանոնակարգը:

1.8. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Խորհրդատուի կողմից միակողմանիորեն՝ այդպիսի փոփոխությունից կամ լրացումից հետո փոփոխության/լրացման մասին Պայմանագրով սահմանված կարգով Հաճախորդին ծանուցելու պայմանով: Սույն կանոնակարգի բոլոր փոփոխությունները և լրացումները սույն կանոնակարգի և Պայմանագրի անբաժանելի մասն են:

2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Խորհրդատուն Հաճախորդին Ծառայությունները մատուցում է գրավոր՝ Խորհրդատուի և Հաճախորդի միջև նախապես համաձայնեցված՝ Տեղեկատվության փոխանակման ցանկացած հուսալի միջոցով: Խորհրդատու և Հաճախորդի միջև տեղեկատվության փոխանակման կարգը սահմանվում է Խորհրդատուի՝ Հաճախորդների դասակարգման և տեղեկատվության փոխանակման կանոնակարգով:

2.2. Խորհրդատուի և Հաճախորդի միջև կապն իրականացվում է Պատասխանատու աշխատակցի միջոցով: Խորհրդատուն Ծառայությունները մատուցում է Հաճախորդի ներկայացրած տեղեկությունների և փաստաթղթերի հիման վրա: Այն դեպքում, երբ հաճախորդը չի տրամադրում Խորհրդատուի կողմից պահանջվող տեղեկատվությունը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա Խորհրդատուն զգուշացնում է Հաճախորդին այն մասին, որ Հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս առաջարկել կամ խորհուրդ տալ այնպիսի ներդրումային ծառայություններ և արժեթղթեր, որոնք առավելագույնս համապատասխանում են Հաճախորդի ցանկությանը, ինչպես նաև գնահատել թե արդյո՞ք տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է Հաճախորդի պահանջներին:

3. ԱՐԺԵԹՂԹԵՐՈՎ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԵՎ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Խորհրդատուն կարող է իրականացնել Արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտություններ, Արժեթղթերի շուկայի վերաբերյալ ֆինանսական վերլուծություններ և կազմել այլ ընդհանուր ներդրումային առաջարկություններ ինչպես Հաճախորդի պատվերով, այնպես էլ իր նախաձեռնությամբ:

3.2. Հաճախորդն Արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, Արժեթղթերի շուկայի վերաբերյալ ֆինանսական վերլուծությունների, ընդհանուր ներդրումային առաջարկությունների կազմման և տարածման պատվեր ներկայացնում է Տեղեկատվության փոխանակման հուսալի միջոցներով: Այդպիսի պատվերների ներկայացման և դրանց հիման վրա Արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, Արժեթղթերի շուկայի վերաբերյալ ֆինանսական վերլուծությունների,

ընդհանուր ներդրումային առաջարկությունների կազմման և տարածման ծառայությունների մատուցման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Խորհրդատուի և Հաճախորդի միջև կնքվող առանձին պայմանագրով: Հաճախորդի պատվերով կատարված՝ Արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունները, Արժեթղթերի շուկայի վերաբերյալ ֆինանսական վերլուծությունները և կազմված ներդրումային առաջարկությունները կարող են տրամադրվել միայն տվյալ Հաճախորդին:

3.3. Խոհրդատուի նախաձեռնությամբ կատարված՝ Արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունները, ֆինանսական վերլուծությունները և կազմված ընդհանուր ներդրումային առաջարկությունները Խորհրդատուն հետագայում կարող է տրամադրել իր հաճախորդներին, հրապարակել Խորհրդատուի պաշտոնական կայքում կամ հանրայանացնել այլ կերպ:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

4.1. Սույն կանոնակարգի բոլոր լրացումներն ու փոփոխությունները հաստատվում են Ընկերության լիազոր մարմնի կողմից (եթե Ընկերության Կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ) և ուժի մեջ են լիազոր մարմնի որոշմամբ սահմանված ժամկետում: